406 Ով Սուրբ Աստված, այս զույգը տես,

1. Ով Սուրբ Աստված, այս զույգը տես,
Քու առջևդ են խոնարհած,
Եւ հիմա այս պսակն օրհնես՝
Ըլլա Քեզմով կնքված:
Միացումն այս խորհրդավոր
Հաստատեցիր սկիզբեն,
Նույն սուրբ կապով փրկյալք այսօր
Քեզի հետ պինդ կապված են:

2. Ինչպես Կանայի հարսնիքին
Ջուրն գինիի փոխեցիր,
Նույնպես այսօր ալ այս զույգին
Տուր օրհնություն երկնաձիր:
Իրենց սուրբ կապն ամուսնության
Ըլլա հաստատ, մնայուն,
Տունն ալ ըլլա սիրույդ օրրան,
Անոր գլուխն ըլլաս Դուն:

3. Սուրբ Հոգիով ու Քու խոսքովդ
Անոնք միշտ առաջնորդվին,
Տուր, որ ամեն օր Քու շնորհքովդ
Արժանավոր կյանք ապրին:
Հավատք, հույս և սեր ունենան
Իրենց կյանքի ընթացքին,
Ծառայողներ Քեզի ըլլան,
Մինչև հասնին տուն վերին: